

« Որովհետեւ նորէն հաւաստողներ կան թէ Անգղիա հաշտարար միջնորդութիւն մ'առաջարկեր է, պարտք կը համարիմ հաւաստել ձեզ թէ Աւստրո-Հունգարական նախարարութիւնն այդ մասը որ և է առաջարկութիւն մ'ընդունած չէ՝ Վիէնայի կառավարութիւնը գիտէ թէ Ռուսաց պատերազմական տրամադրութիւնները փոխուած չեն կարող վերջին յաղթութենէն 'ի վեր, այլ միայն Բելգիայի առամարը կրնան փոխուիլ Պէրլինի կառավարութիւնն ալ համաձայն է այս իրողութեան վրայ, և այս պատճառաւ չուզեր Անգլիոյ կողմէ եղած կամ ըլլալիք միջնորդութեան փորձի մը խառնուիլ, որ անտարակոյս չկրնար յաջողիլ: Հաւաստի եղիք որ Անտրասի կոմսն ոչ միայն դեռ պահանջանք միջամտութեան մը նախաձեռնութիւն չպիտի ընէ, այլ և Անգլիայէն որ և է առաջարկութիւն մ'ընդունելէ առաջ պիտի խնդրէ Պէրլինի կառավարութեանէն որ իրմէ առաջ անցնի այս ճանքուն մէջ: Վիէնայի կառավարութիւնը գիտէ նաեւ թէ Ռուսիա՝ յաղթող իսկ եղած ժամանակ՝ Պալքանի թերակղզւոյն քրիստոնեայ ժողովրդաց վիճակն և ընդհանրապէս Արեւելեան խնդիրը միայնակ կարգադրել չպիտի մտաբերէ առանց տէրութեանց հաւանութեան: Այս մասին Անտրասի կոմսը դեռ վերջին ժամանակներս բացորոշ հաւաստիներ ստացած է: »

Վիէնայի Բոսնիացիներու Ռոյթ-թիք լրագրին Բեզուգուրկի թղթակիցն ալ կը հաստատէ թէ Ռուսիոյ կառավարութիւնն այս միջոցիս տրամադրութիւն չունի որ և է խաղաղական բանակցութեանց տկանը դնելու: « Ռուսիոյ բացած պատերազմը, կըսէ, փառք վատակալու, թուրքիոյ տիրելու կամ իսլամն եւրոպական հողէն վաճառելու նպատակաւ չէ, այլ եւրոպիոյ բազմաթիւ համեմատ գրաւում մ'է, և այս գրաւումն այն ժամանակ միայն պիտի դադրի՝ երբոր թուրքիա ընդունի քրիստոնէից վիճակին բարեօրման պայմանները՝ ըստ Ռուսիա պիտի պահանջէ իրմէ՝ ըստ բազմաթիւ եւրոպիոյ: »

Գաղղիոյ վերջին երեսփոխանական ընտրութեանց մէջ հանրապետականաց յաղթութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց համայն եւրոպիոյ: մանաւանդ Անգլիոյ և իտալիոյ մէջ:

Լոնտոնէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ « ժողովրդական վիթխարի ժողով մը պիտի դուռնարի Անգլիոյ ժողովրդեան ուրախակցութիւնը հազարաւոր համար իւր եղբայր և բարեկամ Գաղղիոյ ժողովրդին: » Հեռագիրը կաւեցնէ թէ « երկու կամ երեք միլիոն ժողովուրդ պիտի մանակցին այս ուրախակցութեան, վասն զի Անգլիոյ բոլոր մեծ քաղաքներն ալ մայրաքաղաքին օրինակին պիտի հետեւին: »

Իտալիոյ Միլան և Թորինո քաղաքացի մէջ ալ հրապարակային ցոյցեր եղան հոկտ. 15 իրիկունը: Միլանի մէջ 300ի չափ իտալացիք՝ Գաղղիոյ հիպատատարանին առջև երթալով, «կեցցէ՛ Գաղղիական հանրապետութիւն, կեցցեն՝ Գաղղիացի ազատական եղբայրք: » գոչեցին:

Վերջին թղթաբերով եկած Աթէնքի լրագրաց մէջ հետեւեալ լուրերը կը տեսնուին.

Էդրուս մ 24 հոկտ.

Թուրքաց ձեռքէն բազում նըպար առնուած ըլլալուն պատճառաւ՝

Ռուսաց բանակին պարէն զրկուիլն առ այժմ գաղթեցաւ:

Թիֆլիս 22 հոկտ.

Պատերազմական խորհրդի մը մէջ որոշուեցաւ կարինը չուսով գրաւելու եւ որպէս զի կարող առջև կեցող բանակը չտարանայ, ուրիշ զօրաբանակ մը կ'ովհասէն կարին պիտի զրկուի: Կարնոյ վրայ քաղաք զօրաբանակին առ ժամանակեայ հրամանատարն է Հէյման զօրավարն:

Պէլկրատ 24 հոկտ.

Ալպանիոյ մէջ թուրքերը կը պատրաստուին նոր յարձակում մ'ընելու Գարատաղի վրայ, և ասոր համար 30000 մարդ կը պատրաստեն Գոսովայի մէջ:

Եւրոպական վերջին թղթաբերով եկած լրագրաց մէջ ալ հետեւեալ լուրերը կը կարդանք:

Լոնտոն 21 հոկտ.

Պուրէշէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բուսնիք երեք անգամ՝ Կրկիցայի երկրորդ ամրոցին վրայ յարձակեցան, բայց ետ մղուեցան՝ 900ի չափ մեղեքաւ ու վիրաւոր թողլով:

Գրոնշթատ 22 հոկտ.

Սիւլէյման փաշային դէպի Բագլըրատ քաղաքը ռազմավարական պատճառներով է, որք զինքը կը պարտաւորէին իւր զօրութիւններն հնար եղածին չափ ամուր գրեքերու մէջ համախմբել Լոմի Ռուսաց բանակին թուական առաւելութեան առջև, որ այսօր 60000 մարդ և 300 թնդանօթ ունի Լոմի և Եանթրայի մէջ տեղն, և 40000 մարդ և 100 թնդանօթ ալ Կորնի-Շթուտէնի մէջ իբրեւ պահեստ:

Այս վիճակին մէջ թուրքաց կողմէ յարձակողական պատերազմ անհնարին է. ընդհակառակն թուրքաց համար շահաւոր է թողուլ որ Ռուսական զօրութիւնն ինքնին տկարանայ իւր գործողութեան խաբխին ընդարձակելու ջանքով: Պուլկարիոյ մէջ Ռուսական զօրութիւնն այժմ 270.000 մարդու կը հասնի ըստ պաշտօնական հաշուոյ:

ՎԵՐԶԻՆ ԼՈՒՐԵՐ

Բելգիայի և Օրլանդէի մէջ հազարակցութիւնն ապահովող Թիւրքի ամրութեան Ռուսաց ձեռքն անցնելու գործողութեան կ'ստուգուի: Ինչպէս նաեւ Թիւրքի պաշտպանող Լիւվա Հադգի փաշային 3000 զօրօք Ռուսաց անձնատուր ըլլալուն լուրը:

Դանուբեան բանակին հետ գլուխուող Լէվրթ Հէրալտի թղթակցը լուր կուտայ թէ Տոպուլուայի Ռուսական բանակը նոր զօրութեամբ ըստ արանալով շարժման սկսեր է, և ըստ ոմանց մէջ մասը Սիւլիթի վրայ կը քալէ Եգեր:

Պուրէշէն հոկտ. 23 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կառավարութիւնը Բալխանքի անուն տան մը հետ պայմանագրութիւն կընքէր և ռազմագիտական երկամուտի մը շինելու համար, որ Պուլկարիոյ թրնօվա, Բորատին և Կորնի-Սթիւտէն քաղաքները Զիւլթովայի հետ պիտի կապէ: Թիւրքի երկամուտը չինութիւնն հոկտ. 15/27ին շարաւթօրը պիտի սկսէր մինչև նոյեմբերի վերջն աւարտելու պայմանաւ:

Կարնոյ կուսակալ Խանյիլ Հադգի փաշան Գէօրգի քեյէն հոկտ. 15/27 թուով հետեւեալ հեռագիրը զրկած է:

« Թշնամեղն հոգին ետ քաշուելով՝ երբոր իրէք-Կիտիք հասայ, որ Պայաղլիան 9 ժամ հեռի է, չորս

վաշտ հետեւակ զօրք և վեց թնդանօթ զրկեցի Պայաղլի Լիւվա Մուլաթար փաշայի հրամանատարութեամբ, և հրահանգ տուի իրեն որ հարկ եղած ժամանակ Պէրքիլ քաղաքի, ուր Գարա Գիլիսէն Արճէլի ճանրով վաշտ մը զօրք և երեք թնդանօթ զրկել է: Այս անօրէնութիւններն ընկէ հետ մնացեալ զօրքս այսօր Տէլի-Պաշայի կընէն անցայ և Թօլի-Հօճա դիւղը հասայ: Վաղը՝ շնորհիւ Աստուծոյ կը յուսամ՝ Գէօրգի Գէօր հասնիլ:

« Նախադրուած թեան համար դրերցի վանայ կուսակալին և գնդապետ Ահմէտ պէյին որ վեցերորդ զօրաբանակին երկու վաշտերն՝ որ ճուլամէրի և Բաղէշ կը գտնուին՝ չուսով Պէրքիլ դիւղը զրկեն, որ Գարաքիլիսէն երեք ժամ հեռի է: Այս վերջին տեղը հեծկազօրաց կը սիւ մեղաւ, և յաղթութիւնը մեր կողմ մնալով թշնամին ետ քաշեցաւ: « Այս ժամուս չեմ գիտեր թէ թըշնամին ո՛ր է: Այսօր հետեւ ստանալիք տեղեկութիւններս կը հաղորդեմ ձեզ:

« Բանի մ'օրէ՛ ի վեր լուր չտալուս պատճառը հեռագրական թնդերուն խզումը ըլլալն է: »

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 29 հոկտ.

Համեմատական ընդարձակութեան մը նացած տասնհինգ երեսփոխանաց ընտրութիւնն երէկ կատարուելով, հինգ հանրապետականք և տասը պահպանողականք ընտրուեցան:

Հոկտ. 14ի ընտրութիւնը 316 հանրապետական և 198 պահպանողական տուած ըլլալով, այս վերջին ընտրութեամբ հանրապետական երեսփոխանաց թիւը կը ըլլայ 321 և պահպանողականացը կը ըլլայ 208: Ասոնց վրայ պէտք է աւելցնել զաղթականութեանց չորս ընտրութիւններն՝ որ հաւանականաբար հանրապետական պիտի ըլլան: Հետեւաբար երեսփոխանական ժողովը պիտի բաղկանայ 325 հանրապետականք և 208 պահպանողականք:

Նիս 29 հոկտ.

Միտհաթ փաշան երէկ Նիս եկաւ:

Պուրէշ 29 հոկտ.

Ռաքօվիցա զօրավար Բուսնիական չորրորդ զօրաբանակին հրամանատար անուանեցաւ փոխանակ Անկէլէպօ զօրավարին: Փարիզ 29 հոկտ.

Նախարարաց հրամարական ընդունւեցաւ: Նոր նախարարութիւնը կեդրոններէն պիտի առնուի:

Պարիզ 30 հոկտ.

Կը հաւատեն թէ միջնորդութեան համար բանակցութիւնը կը լընան Իտալիա՝ Գերմանիոյ հաճութեամբ և Անգլիոյ հետ համաձայնութեամբ առաջարկող պիտի ըլլայ: Աւստրիոյ հաւանութիւնը կը յուսացուի:

Փարիզ 30 հոկտ.

Նախարարաց փոխփոխութիւն չպիտի ըլլայ մինչև նոյեմբեր 3: Կը կարծուի որ հանրապետութեան նախագահն այն ժամանակ ոչ զինադրական քաղաքականութեան մը պիտի հետեւի, ոչ ալ ծայրագոյն վիճակներ ընդ քաղաքականութեան, այլ իրաւասփական քաղաքականութեան մը պիտի հետեւի՝ ծերակուտի և երեսփոխանական ժողովը երկու մեծամասնութեանց տարբեր համեմատութեամբ երեսփոխանական իրաւանց վրայ հիմնեալ, որպէս զի ծերակուտին ալ կեդրոնէն և երեսփոխանական ժողովը ճախ կեդրոնէն առնուած տարբերներէ բաղկացեալ նախարարութիւն մը կ'ազդեցի՝ կարող ըլլայ երկու ժողովոց մէջ ներդաշնակութիւնը վերահաստատել:

Մարսիլա 30 հոկտ.

Փարիզի Օմանեան նոր դեսպան Ապրիլ փաշան այսօր Մարսիլա հասաւ և իրիկունը Փարիզ պիտի երթայ:

Չիթինճէ 30 հոկտ.

Նիքիթա իշխանը Պանալուքա գնաց: Կը կարծուի որ Գարատաղիք նորէն զօրծողութեան պիտի սկսին:

Պարիզ 30 հոկտ.

Կառավարութիւնը շինութիւններ ընելու համար 126 միլիոն մարքի փոխառութեան ծրագիր մը ներկայացուց երեսփոխանական ժողովոյն:

Փարիզ 31 հոկտ.

Պ. Ժիւլ Կրէմի ֆարիզ վերադառնալով՝ յայտնապէս չափաւոր և հաշտասէր լեզու կը գործածէ: Ձախակողմեան այլ եւ այլ խմբակայ զիւններն երկուշաբթի դուստրուելով իրենց բռնելիք ընթացքը պիտի որոշեն:

Լոնտոն 31 հոկտ.

Օմմ. Գօնա.	40
Փօթ.	1865 40 1/2
•	1869 40
•	1871 39
•	1872 48
•	1873 9 7/8
•	Եղիպատ.
Անգլ. Գօնա	55 1/2
	96 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոստերական հրամանաւ՝

Պաշտօնէ քաշուած Ֆերիք Հաճի Հալէտ փաշան Կ. Պոսոյ քաղաքային զինուորաց ընդհանուր հրամանատար անուանեցաւ:

Կ. Պոսոյ քաղաքային զինուորութիւնը վեց գունդէ կամ քսան հորս վաշտէ կը բաղկանայ, և երկու զօրաբանի բաժնուած է Եւստօֆ փաշայի և Զէքէրիա փաշայի հրամանաւ լուծեան ներքէն:

Վեհ. Սուլթանն անցեալ օր հաճեցաւ իւր ներկայութեան ընդունիլ քանի մը զօրական, որոց վերքը բըժըշկուած ըլլալով հիւանդանոցէն ելած էին:

Ն. Կ. Վեհափառութիւնն իւր ձեռք արժանեաց նոր շքադարմը կախեց յիշեալ զօրականաց կուրծքը:

Պոնիոյ և Հէրսէքի Օմանեան զօրաց հրամանատար Մէհմէտ Ալի փաշան երեքշաբթի օրը մայրաքաղաքէս մեկնեցաւ՝ Սէլանիկի և Միթրօփիլայի ճանրով Սէրայէվօ երթալու համար:

Երկուշաբթի օրը կաթոլիկ Հայոց դիւանօր եկեղեցականներէն ու աշխարհականներէն ոմանք Գեր. Հասունեանի բնակարանը գումարուելով՝ երկու կուսակցութիւններն իրաւասփութեամբ միացնելու միջոցներուն վրայ խորհրդակցեցան:

Կրտսէի թէ Հասունեանք՝ միութեան առաջին և անհրաժեշտ պայման ցուցեր են նախ Գեր. Հասունեանը հոգի որ գլուխ ճանչել Կաթոլիկ հաստատութեան իսկ երկու կուսակցութեանց անհամաձայնութեան առիթ եղող ուրիշ կէտերուն կրօնական մասը նախ բարձրատիճան եկեղեցականաց ժողովի մը ձեռք կարգադրել առաջարկեր են:

Այս կէտերուն վրայ թէ և որոշում մը չէ եղեր, բայց կերելի թէ հակահասունեան կղերին և աշխարհականաց մէկ մասը զիջում ընելու տրամադրութիւն ունին:

Պատրէթ թիւ ծանուց անէ թէ կոյսերական կառավարութիւնն որոշեց նորէն 300000 մարդ ի գէն կուլ պահեստի համար: Ասոնց 80000 և 1292ի կանոնաւոր զինուորագրութեան կը վերաբերին, մնացեալն ալ Բէտիֆ և Միլաթէ հասփիլ են:

Եւրոպական վերջին լրագրիք կը ծանուցանեն թէ Գաշկարի նոր վեհապետը՝ Պէկ-Կիւլ, թուրքաստանի Ռուսական կուսակալ Բալաքովսքի զօրավարին նամակ մը գրեց է՝ ծանուցանելով թէ Ստուծոյ օգնութեամբ իւր ներքին թշնամեաց յաղթել է, և հիմա իւր գէնքը Զինաց դէմ պիւ-

տի գարձուէն, որք իւր երկրին մէկ մեծ մասը գրաւեր են :

Կիրակի օր թօք դարու Հայ երիտասարդ ջրանկիր մը գինեպանի մը հետ կուտայր, որուակի հարուածով մը մարդուն երեսը վիրաւորելուն պատճառաւ, զինքը ձերբակալելու համար կանչուած ոստիկաններուն ալ չհնազանդելուն և գիմադրելուն վերայ, ոստիկանք բռնի տանել կուգին զինքը, որով երիտասարդը ոստիկանաց ալ վրայ յարձակելով մէկ քանին կը զարնէ ու կը վիրաւորէ, բայց ինքն ալ գլուխը պատռած, արիւննաթաթաւ և խոշտանգեալ վիճակի մէջ ոստիկանութեան դուռը կը տարուի :

Մէծահասակ Հովհաննէս

Սթանպուլ լրագիրը կը ծանուցանէ թէ ոստիկանութիւնն երկուշաբթի օրը Ղալաթա-Սէրայի հրատարակին վրայ մարդ մը բռնեց, որոյ համար խտրացի է կրօնն, բայց իրիւր Ռուսական լրագրացոյց տրուած էր իշխանութեան :

Թիշեայ անձը բռնուած ժամանակ գաշտիով վիրաւորեց ոստիկանութեան գործակալը :

Այս առաւօտ ժամն 3 1/4 ին և 5 1/4 ին երկիցս երկրպարտի ցնցում գգացինք Բաւական ոստիկանութեամբ, բայց բարեբաղդ արար անջնաս :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ԷՍԷՍՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

19 հոկտ. չորեքշաբթի իրիկուն	40.31
20 հոկտ. հինգշաբթի առաւօտ	
բացուեցաւ	40.32
ժամ 6 ին	40.33
Բուսնիկ երկաթուղի	Փր. 31
Թղթաղարմ	Լր. 193

ԲՆԹԱՅԻՐ ԱՐԺԱՆԹՈՅ

Կ. Պօլս 19 Հոկտեմբեր

Ստիկթէ Եֆէնդարի բաժ. Անգլ. Լր. 3.	8
• Փոխանակութեան	2.12
Կ. Պօլս Պանդային	3.40
Քրէտի Եֆէնդարի	3.42
Քրէտի Օսթրո-Թիւրք	—
Փոլս. 1863	Ֆր. 55
• 1865	56
• 1869	50
• 1872	47 3/4
• 1873	50
Թրամուսյ	Օսթ. Լր. 4 5

ԲՆԹԱՅԻՐ ԿՐԱՍՏՈՅ

19 Հոկտեմբեր

Անգլ. Լր.	409 3
Նաթիլոն ոսկի	86 20
Խմբէրիս Ռուս	8 20
Գրքերից	51 3
Հինգ Գրանք	—
Հինգ նոց	4 17
Պղինձ	164 20

ԱԶԳԱՅԻՆ

Կարնոյ Առաջնորդէն և Քաղ. Ժողովէն ՚ի Պատարկարքարան հասած տեղեկագրէ մը կը հասկցուի թէ Պալատի շուրջը դանուած մեր տարաբաղդ ազգայիններէն, որոց դուռն 1483 ի կը յանգի, 136 հոգի սպաննուած, 103 հոգի վերք և վռնէ մեռած, և 124 հոգի սղմ մնացած են : Իսկ Արաշիբերտի կողման կը բռնուեցան քննութիւնը գեւա վերջացած չէ :

Տեղեկագրին նայելով թէ և Նիւթական վարտը մեծ է, սակայն անձանց կորստան տալուի ըլլալը ճիշդ քննութեամբ ստուգուած է, յորմէ կը հասկցուի որ ասկէց առաջ զրուցուածին չափ չէ : (Պաշտօնական)

Ռուսներու Գործարքէն հետեւեալ նամակը գրուած է մեզ ՚ի հրատարակութիւն :

Ֆեբրուար 1/15 հոկտ. 1877

• • • Խմբագիր •

Այս օրերս մեր ձեռքն անցաւ «Տեղեկութիւն Հայոց գաղթականութեան» անուն տեսարակ մը՝ որ Մոսկու-Վարշայ, Հաղարկոյ և Լեհաստանի Հայոց վրայ տեղեկութիւններ կը տարուակէր : Եւ զեղեկութիւնները՝ որոնք ներքին մեզ ըսելով ստուգութեան հետ շատ կէտեր կը պարունակէին :

Մենք պատիւ չունինք ճանաչուլ զՊ. Արշակ Ալթընեան, այն տեղեկագրութեան հեղինակը, որ այս կողմերը եկած է եղեր : Բուսնիկ մէջ այդ անունով Հայոց մը ներկայութեան վրայ բնաւ տեղեկութիւն չունինք, միայն թէ լսած ենք այդ անունով անձի մը Պրաշովէն անցնելին, և այդ այնպիսի վիճակի մը մէջ, որուն նկարագրութեանը վրայ ծանօթութիւն մը տալու առ այժմ հարկ չենք տեսներ :

Գաղթականութեան հեղինակը, կամ այն է որ իրեն անձանցով և ճշմարտութեամբ եւ արժանաշատութեամբ կողմանէ կտալանք անձանց քաղեր է իւր հրատարակած տեղեկութիւնները, կամ այն է որ յանդիմանի ներկայացեր է Բուսնիկ (թերեւ և միւս տեղերու) հայաբնակ քաղաքները, և փողոցներէն քաղելով ՚ի լոյս ընծայեր է : այս երկու պարագայից մէջ ալ իւր տեղեկագրութիւնն ազդի փառաբանացը չափով համապատասխանէ : Վասն զի Հայոց ազգին աստ անդ գաղթող խումբերուն վրայ բոլոր Հայոց ծանօթութիւն մը տալով արդարեւ որչափ կարեւոր և փառաբանիչ աշխատի ալ փափուկ և նուրբ խնդիր մ'է, որոյ փութանութեան արժանի լինելուն համար հարկ է խորապնդել, մանր և ՚ի մօտայ տեղեկութիւններ քաղել, և այնքա եղածին չափ ուղղութեան, արժանաշատութեան և անաչառութեան կողմանէ ալ փորձով վկայուած լինի : Ասոնց հետ մէկտեղ փառաբանութեան կնիքը կրելու համար հարկ է իւրաքանչիւր տեղացի Հայոց անհաճանդեր ներկայացուցիչներէն հաստատուած լինին արուած տեղեկութիւնները :

Վերոյիշեալ տեսարկը, ցաւ է մեզ ըսել, ասոնցմէ բոլորովին զուրկ է : Պ. Արշակը խարտած է իր քաղած ու հաւորած տեղեկութիւնները մէջ : Մենք՝ զուրկ զերդատանին բոլոր անդամներն այնչափ զովեւանքով գրուած էր Պ. Արշակը, իւր այս բարեսրտութեան համար չնորհալարութիւնն յայտնելով հանդերձ, ցաւ ՚ի սիրտ ստիպուած ենք ՚ի սէր ընդհանուր ազգին և իւր՝ պատուոյն գաղթական Հայոցս վիճակին վրայ տարուած այլ ընդ այլ տեղեկութիւններն ուղղել :

Նախ տեսարկին պարունակութեանց ընդհանուր կէտերն սխիւք ընենք :

Ա. Մեծ եղաւ զարմանքիս երբ վերեալ տեսարկին կողքին վրայ 1877 թ. Զառն գրուած տեսանք, զի Ֆեբրուարի Պ. Արշակին գաղթականութիւնը կը ճանաչայ՝ ո՛չ զինքը :

Բ. Չարմանքիս աւելի մեծ եղաւ երբ տեսարկին ճակատին ետեւ գարձեալ Զառն, ՚ի պարանի Հայաստանաց ընկերութեան զրուցուած տեսանք. զի Ֆեբրուարի մէջ ո՛չ Հայաստանաց ընկերութեան տըպարան կայ, ոչ ալ եղած է :

«Հայաստան ընկերութիւն» ունինք, որ չէ թէ Տպարան՝ այլ բարձրագոյն վարժարան մը լսողաւ նպատակն ունի՝ Հայ լեզուն հոն ստուգաբանելու և պարսկերէնէն և լեզուներէն և լեզուներէն մէջ Հայ լեզուն բնաւ չկայ :

Մեր այս ընկերութիւնն՝ որոյ զբաւմաղութննն հիմա 40,000 ֆրանքի մօտեցած է, յոյս մեծ ունինք որ իւր հիմնադրաց և ընկերաց այս ազգասիրական նպատակը պիտի պահէ, իւր գրամաղութնն առ այդ բաւական ըլլալու ստուարութեան համեմով :

Ուստի չենք հասկնար թէ Պ. Արշակին ի՞նչ նպատակաւ և համարձակութեամբ Ֆեբրուար Հայաստան ընկերութիւնն իւր տեղեկագրութեան այլ ընդ այլ ծանօթութեանց իւր աչքը դրած և գործակից ցուցնելու կը յանդգնի, մանաւանդ երբ զայն պաշտօնական կերպարանքի մը տակ

ալ կը մտցնէ՝ Տեղեկագրութեան անուն տեղեկութեանց համար կը գործածուի մեր արդի լեզուն մէջ : որով պաշտօնեաց մը կամ պաշտօնեաց մարմին մը իրեն յանձնած խնդրոյ մը քննութեան կամ դատարարութեան արդիւնքն իրեն բարձր մարմնէն կը հաղորդէ՝ ուսկից այդ յանձնարարութիւնն ընդունած է : Չենք գիտեր թէ Պ. Արշակին ո՛ւսկից յանձնուած է այդ պաշտօնն, և որչափ ընդարձակութեամբ, որ իւր տեղեկութիւններն այդ ձեով հրատարակութեան կը հաղորդէ : արդեօք անխորհուրդ չաճախնդրութիւնն այսպիսի պարագայի մը մէջ հոստարակաց դատանին առջև դնենք արդարացնելու բաւական է : մանրամասնութեանց մէջ մտնել տեղիքը կը համարուի :

Գ. Իրեն Հայ մը մեծ ցաւ պատգնէ երբ Պ. Արշակին յառաջադրանքն մէջ տեսնենք որ Հայ ազգը քաղաքակրթութեան հին մէջ վայրենի ազգի մը վիճակին լծուցեր է : Իրեն Հայ և Հայութեան պատուոյ նախանձախնդիր՝ կ'արհամարհուի իւր այդ արեւմտ, զի քաղաքակրթութեան արհամարհմը մինչդեռ զՀայն արեւելից այլ և այլ ժողովրդաց տմենէն քաղաքակրթութեան վերջոյ ճակատին որ երբ այդ արեւմտ Պ. Արշակին ձեռքը կուտայ իրեն Հայոց, հակասութեան մէջ կ'ընկնուի նպատակն ունեցած ըլլայ :

Արդարեւ, երբ Բուսնիկի Հայն իւր ընձանցած մարդուն բարե չափ կամ դատով մը զինի չհրամցներ, և կամ Բուսնիկի այս ինչ քաղաքի Հայն անձանցով անձի մը հետ կատարեալ փութանութեամբ տեսութիւն ընել չուզեր, ասի քաղաքակրթութեան պակասութիւնն չնշանակեր, այլ անոր հակառակը : զի Հայը փորձով սովորած է ամեն մարդու իւր հայրը չարածել, մանաւանդ Բուսնիկի Հայն :

Գ. Պ. Արշակին անմարտելի անորոգանք մը կընէ երբ փախ կը յայտնէ թէ Բուսնիկի Հայութիւնը կորստան վիճակին մոռնալու վրայ է : Արդեօք եօթն ութ դարերէ ՚ի վեր ո՞վ իրաւոր եղած է Բուսնիկի Հայոցս այս կողմերն իրենց կրօնակից ժողովրդաց մէջ ազդութիւն, ազդային լեզու, ազգային եկեղեցի, ազգային առանին սովորութիւններ, հայկական համեմատութիւնն ու պարկեշտութիւնն անմիտ և ամբողջ պահելու : Ո՞ր ժողովուրդը իւր երկրէն այսպիսի հեռանալէ ետքն ասոնք այսպիսի անպակաս կրնայ պահել, այնպէս որ հարկաւոր տարիներէ ետքն իւր ամեն բարեմասնութիւններն ու ձիւրքերն ճանաչուի թէ այս ինչ ազգն է :

Եթէ Բուսնիկի Հայն իւր այն ազգակիցներուն հետ՝ որոնք Հայաստանի աւելի մօտ են քան զինքն, բաղդատուի, այնչափ իւր քիչուորութեանն, որչափ հեռաւորութեամբ, մինչդեռ Հայաստանի մօտաւոր Հայեր թէ մեծ թիւ ունին և թէ մերձաւորութիւնն, կընտրուի թէ Բուսնիկի Հայն աւելի նախանձախնդիր է Հայութեան, և աւելի անհերոգ Պ. Արշակին պէս չընող տեղեկագրերի մը զբաւարարութեանց, որ կը յանդգնի մինչև իսկ ըստ Բուսնիկի ազգամէր կոչմամբ ծաղրել գրութեանցի Հայն, ու չընելով իւր կարեկցութեան արժանի ընթացքին ու լեզուն :

Պաշտօնական Խմբագիր

Ա. Մեծ. Ընդհանր. Օրէնքներ

Գիւղիս Թագ. խորհրդոյ պահած հինգ անդամաց ընտրութիւնն ամսոյս 16 ին յատենի Ս. Եկեղեցոյ կատարուելով, քուէարկութեան մասնակցող 154 ընտրողաց բացարձակ առաւելութեամբ հետեւեալ Մեծ. անձինք թաղական խորհրդական ընտրուեցան :

Խոստովեան Տիգրան Էֆ.	քուէ 125
Սիմոնովի Սիմոն	» 115
Մարքոսեան Սեպուհ	» 90
Անանիան Նիկողոս	» 85

Թաղական խորհրդոյ պահած անդամաց թիւը հինգի լրացնելու համար, վերտաին բնտրութիւն պիտի ըլլայ, առաւելագոյն քուէ փութան :

Կող հետեւեալ Մեծ. անձանց վրայ որք են :

Մրճիկեան Եղիա Էֆ. քուէ 73

Քօլօբան Ա. Կարապետ քուէ 74

՚ի գիտութիւն Մեծ. ընտրողաց կը յայտարարենք որ Մեծ. Ա. Կարապետ Էֆէնտի Քօլօբան իւր հրաժեշտը հաղորդած է մեզ, գրաւոր կերպիւ ազգային ծանր պաշտօնը չապառաճուելով : Հետեւեալ կը ներկայացնենք յինչեալ Էֆէնտիին ետքը առաւելագոյն քուէ փութանը քուէ :

Սարգսեան Սուքիաս Էֆ. քուէ 65

Յայանի Է թէ ընտրող Մեծ. անձ միայն պիտի նշանակեն իրենց քուէ թուղթին վրայ, հետեւեալ վերոյգրեալ ցանկէն գուրս եղած քուէները ըստ օրինի անվաւեր պիտի համարուին :

Քուէ համարը պիտի կատարուի ամսոյս 23 ին, կիրակի օրը, առաւօտեան ժամերու ընէն ետքը : Քուէները մինչև ժամը 4 1/2 պիտի ընդունուին :

Ուստի, կը հրաւիրենք բոլոր Մեծ. ընտրող, որ իրենց պարտականութիւնը փութան կատարել ազգասիրաբար :

19 հոկտ. 1877 Մամալ ազգութարար Օրթոյ իւր Նախագահ Ընտրողական Ժողովոյ Ֆալիք Ս. Վ. Արշ.

Ի Լ Ա Ն

Աստքիւրի Շահանէ Գալիլէականե անպարը իչին Տարը Շուրաւա մահ. փուղ պուլունան նուսնէն վեճակէ մուպայեա օլունամար օլան երկրլի պին չիթի թուղու գուրու Բուսնիկ կեօնիւնտէն մագթու չարը թարիսի գօնթու թուա հէման թեպիմ օլունմագ վէ մագպուղ սէնտի վիրուաինտէ պէհապը սիմ մէճիտիլ երկրլի մի զրուչա վէ մէճիտիլ վերլմէգտէ վիեացա ֆիլյալթը իլէ պիլ հիսապ ֆերգի իլէ պէհապէր գալիմէ օլարագ պէր վէճը փեշին Նիլալիլ խաղինէ սինտէն վերլիմէ շարթը իլէ պէհէր չիթի ալթը զրուչա թալիլի Էօհ տէսինտէ օլուպ թըլլինի Էփլէր օլուն մինին երկրլիմին փէնճէնպիսի կիւնի գարարը գալիլի վերլիմէ յիւնտէն, իթա իթմէյ Թալիլ օլարարըն եթվ մի մեղքիւրտէ Տարի Շուրալի ասքէրիլէ կեպէլէրի :

19 թըլլինի Էփլէր 1877 Պաշտ. Սերասքէրի

Աստքիւրի Շահանէ Գալիլէականե իչին միլթեհիւտիլի թարաֆընտան գօնթու թեպիլ օլունմագ վէ մագպուղ սէնտի վիրուաինտէ պէհապէր սիմ մէճիտիլ երկրլի մի զրուչա վէ մէճիտիլ վերլմէգտէ վիեացա ֆիլյալթը իլէ պիլ հիսապ ֆերգի իլէ պէհապէր գալիլի վերլիմէ յիւնտէն, իթա իթմէյ Թալիլ օլարարըն եթվ մի մեղքիւրտէ Տարի Շուրալի ասքէրիլէ կեպէլէրի :

4 թըլլինի Էփլէր 1877 Պաշտ. Սերասքէրի

